ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. III

21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ

DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century

РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
вызовы и возможности 21-ого века

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ - *ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., դոցենտ*
ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ - *ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - *ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, տ.գ.թ., դոցենտ*
ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - *ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., տ.գ.դ., պրոֆեսոր*
ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - *ՀՊՏՀ պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
Տ 778 **հնարավորություններ**: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՝ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրատապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հետազոտական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այստեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահետազոտական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հետագա գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մաղթում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

program of the RA government envisages that poverty in our country should be reduced by 12% and to 18% from current 30%. That's why it is important to promote investment and to ensure 5% annual economic growth.

In the article, we have set out to clarify the issues of economic growth and poverty reduction.

ԷԴԳԱՐ ԹԱՂԱՐՅԱՆ
Ասպիրանտ, ՀՊՏՀ

ՀՀ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հիմնաբառեր. *ինստիտուցիոնալ ծուղակ, բարձր տեխնոլոգիական արտադրանք, ինստիտուցիոնալ բարեփոխումներ, տեխնոլոգիական բաղադրիչ*

Չնայած 2000-ական թվականներից սկսած Հայաստանում ՀՆԱ-ն դինամիկ աճել է, որոշ տարիների՝ նույնիսկ երկնիշ տեմպով, այնուամենայնիվ այն պայմանավորվել է հիմնականում երկարաժամկետ հեռանկար չունեցող ոլորտներում գրանցված աճերով: Հաշվի առնելով տարբեր ժամանակահատվածներում ՀՀ տնտեսական աճի առանձնահատկությունները՝ սույն աշխատանքում դիտարկվել է աճի 4 փուլ, և իրականացվել է գործոնային վերլուծություն ըստ այդ փուլերի՝ կարևորելով հատկապես տեխնոլոգիական փոփոխությունների համար գործող ինստիտուտների դերը:

Հայտնի է, որ ԽՍՀՄ կազմում Հայաստանն աչքի է ընկել ոչ միայն քիմիական, սննդի, հանքահումքային զարգացած արդյունաբերությամբ, բարձրագույն կրթությամբ որակյալ աշխատուժով, այլև բարձր տեխնոլոգիական արտադրությամբ, որը կազմել է ՀՆԱ մոտ 20%-ը[1]: «ԻՎի Քոնսալթինգ» խորհրդատվական ընկերության կողմից հրապարակված հետազոտություններից մեկում Հայաստանը, նույնիսկ ներկայացվել է որպես ԽՍՀՄ «Սիլիկոնյան հարթավայր»[2]: Տնտեսական աճի առանձնահատկությունները բացահայտելու համար 1990-ական թթ. մինչ մեր օրերն ընկած ժամանակահատվածը պայմանականորեն բաժանենք 4 փուլի՝

1. հետխորհրդային (1990–1995 թթ.),
2. վերականգնողական աճի (1996–2000 թթ.),
3. երկնիշ տնտեսական աճի (2001–2009 թթ.),
4. հետճգնաժամային (2010 թ. սկսած):

[1] Социально-экономическое развитие постсоветских стран: итоги двадцатилетия, “Российская академия наук”, М. 2012, с. 191.

[2] Armenia: Diaspora Assisted Growth, EV Consalting, p. 3.

Հետխորհրդային փուլ

Այս փուլը բնորոշվում է կենտրոնացված պլանային տնտեսական համակարգից ազատ շուկայական համակարգին անցման բուռն և ռիսկային ինստիտուցիոնալ փոփոխություններով: Ա. Մարգարյանի «Տնտեսության արդիականացման տեխնոլոգիական և ինստիտուցիոնալ գործոնների փոխհարաբերության հարցի շուրջ» վերնագրով հոդվածում նշվում է, որ «մեկ անգամ ընկնելով ինստիտուցիոնալ ծուղակի մեջ համակարգն ընտրում է զարգացման անարդյունավետ ճանապարհ, ընդ որում՝ ժամանակի ընթացքում անցումն առավել արդյունավետ հետագծի կարող է ռացիոնալ չլինել»[1]: Հենց այդպիսի «ինստիտուցիոնալ ծուղակում» հայտնված տնտեսական համակարգի խեղաթյուրման (դեֆորմացիայի) մասին են վկայում հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները: Այսպես՝ անկախությանն անմիջապես հաջորդող 6 տարվա ընթացքում մակրոտնտեսական ցուցանիշները վատթարացել են. ՀՆԱ-ն կրճատվել է՝ 2,256 մլն դոլարից 1995 թ. կազմելով 1,468 մլն դոլար, աճել է գործուրկների թիվը, ինֆլյացիայի մակարդակը հասել է նույնիսկ 3,373 %-ի[2]:

Վերականգնողական աճի փուլ

Վերականգնողական աճի փուլը բնորոշվում է տնտեսական աճի հարաբերական կայունացմամբ՝ միջինում տարեկան 4–6%[3]: Այս փուլում ՀՀ ԿԲ-ին հաջողվեց զսպել գնաճը, իսկ մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն աճեց՝ 1996 թ. 503-ից 2000-ին հասնելով 1,911 ԱՄՆ դոլարի (գրեթե նույն մակարդակին, ինչ 1990-ին էր): Թեև ոչ էական ծավալներով, այնուամենայնիվ, արտահանման մեջ բարձր տեխնոլոգիական արտադրանքը 2000 թ. կազմեց մոտ 4 մլն ԱՄՆ դոլար[4]: Պատահական չէ, որ 2014 թ. ՄԱԿ-ի տնտեսական հանձնաժողովի հրատարակած «Նորարարական ներկայացվածություն» հաշվետվության մեջ նշվում է, որ 1990–2000-ական թվականների ընթացքում ՀՀ տնտեսության մեջ գերակշռել են, այսպես կոչված, «գոյատևման» ռազմավարությունները՝ նկատի ունենալով ավանդական տնտեսական կապերի վերացումը[5]:

Երկնիշ տնտեսական աճի փուլ

ՀՀ տնտեսական աճի առանձնահատկությունները բացահայտելու առումով, առանձնակի կարևորություն ունի երկնիշ տնտեսական աճի ուսումնասիրությունը, որի ընթացքում ցնցումային զարգացումները հաղթահարելուց հետո նշմարվեցին որոշակի օրինաչափություններ: Չնայած այս փուլում ՀՆԱ-ն աճել է երկնիշ տեմպերով (տարեկան՝ առնվազն 11-13%), այնուամենայնիվ, եթե իրականացնենք աճի գործոնային վերլուծություն, կտեսնենք, որ այն հիմնականում պայմանավորվել է շինարարության, ստացված տրանսֆերտների և ծառայությունների աճով, այն դեպքում, երբ նույն ժամանակահատ-

---

[1] Ա. Մարգարյան, Տնտեսության արդիականացման տեխնոլոգիական և ինստիտուցիոնալ գործոնների փոխհարաբերությունների հարցի շուրջ, էջ 8:

[2] Համաշխարհային բանկի վիճակագրություն:

[3] Նույն տեղում:

[4] http://data.worldbank.org/indicator/NY.GDP.PCAP.CD?locations=AM&view=chart

[5] Innovation Performance Review of Armenia, United Nations Economic Commission for Europe, New York and Geneva, 2014, p. 10.

վածում գյուղատնտեսության և արդյունաբերության ոլորտում թողարկման ծավալները դինամիկ կերպով կրճատվել են (գծապատկեր 1):



Գծապատկեր 1. ***ՀՆԱ աճի վրա ազդող հիմնական գործոնները 2000–2009 թթ.***

Համաձայն գծապատկեր 1-ի՝ 2000 թ. ՀՆԱ-ն 1,031 մլրդ դրամից աճել է՝ 2008 թ. հասնելով 3,568 մլրդ դրամի, ընդ որում, նույն ժամանակահատվածում շինարարությունն աճել է 101 մլրդ-ից հասնելով 858 մլրդ դրամի (մասնաբաժինը ՀՆԱ-ի մեջ 2008 թ. կազմել է 24%), արտերկրից ստացված դրամական փոխանցումները՝ 98 մլրդ դրամից՝ 582 մլրդ դրամի, իսկ ծառայությունները՝ 179 մլրդ դրամից՝ 698 մլրդ դրամի[1]: Փաստորեն, կարելի է արձանագրել, որ տնտեսական աճի բարձր տեմպերը հիմնականում պայմանավորված են եղել շինարարական այսպես կոչված «բումով» և արտերկրից ստացված տրանսֆերտներով: «Տնտեսական աճի որակ» թեմայով ՀՊՏՀ 2012–2013 թթ. ներհամալսարանական դրամաշնորհային հետազոտության մեջ նշվում է, որ 2001–2008 թթ. ընթացքում ՀՀ տնտեսական երկնիշ աճը, ըստ էության, որակյալ տնտեսական աճ չի կարող համարվել, քանի որ առաջացրել է կառուցվածքային էական կախվածություն տնտեսական մեկ ճյուղից, ընդ որում, բնույթով՝ անկայուն[2]: Ի լրումն վերոնշյալի, Ա.Եղիազարյանի «Հայաստանի տնտեսության կառուցվածքային վերլուծությունը» վերնագրով հոդվածում նշվում է. «Շինարարության զարգացումն ունի թույլ զարգացած տնտեսություններին բնորոշ առանձնահատկություններ: Հատկանշական է, որ շինարարական աշխատանքների մեծ մասն ուղղվել է ոչ թե վերամշակող արտադրական հզորությունների, այլ բնակարանային և ենթակառուցվածքների (տրանսպորտ, էներգետիկա և այլն) շինարարությանը»[3]: «ՀՀ-ում ներդրումների արդյունավետ տեղաբաշխման հիմնահարցերի շուրջ» վեր-

[1] ՀՆԱ-ի մեջ շինարարությունը հաշվարկված է մեր կողմից՝ ՀՀԱՎԾ վիճակագրական տվյալների հիման վրա:

[2] «Տնտեսական աճի որակը», ՀՊՏՀ 2012-2013 ներհամալսարանական գիտական դրամաշնորհային հետազոտություն, էջ 67:

[3] Ա. Եղիազարյան, Հայաստանի տնտեսության կառուցվածքային վերլուծությունը (հատվածային, զբաղվածության և եկամտային ասպեկտներ), էջ 52:

նագրով հոդվածում Լ.Կարապետյանի կողմից հաշվարկվել է «տնտեսության ոլորտային առաձգականություն» գործակիցը (ցույց է տալիս, թե ինչպես է տնտեսական աճը արձագանքում տնտեսության կառուցվածքային փոփոխություններին), որը նույնպես վկայում է շինարարության և ծառայությունների նկատմամբ տնտեսական աճի բարձր առաձգականության մասին[1]: Իհարկե, տնտեսական աճը, առավել ևս՝ երկնիշ տեմպերով, մի կողմից՝ ողջունելի է, սակայն մյուս կողմից՝ պետք է ունենա երկարաժամկետ հեռանկարներ, որի երաշխիքը տեխնոլոգիական բաղադրիչով պայմանավորված մրցունակ արտադրանքի թողարկումն է, որն ամենևին բնորոշ չէ քննարկվող ժամանակահատվածում ՀՀ տնտեսական աճին: Ասվածը հիմնավորելու համար բավական է նշել, որ ՀՀ արտահանման մեջ բարձր տեխնոլոգիական արտադրանքի ծավալն առավելագույնին հասել է 2008 թ.՝ կազմելով ընդամենը 6.5 մլն ԱՄՆ դոլար կամ արտահանման մոտ 0.61%-ը, ռեզիդենտների պատենտավորած գյուտերը չեն գերազանցել 226-ը (2008 թ.), իսկ ոչ ռեզիդենտների պատենտավորածները՝ 15-ը (2001 թ.)[2]: Այնուամենայնիվ, նորարարությունները խթանելու համար ինստիտուցիոնալ փոփոխությունների մեկնարկն ըստ էության տրվել է հենց այս փուլում: Մասնավորապես՝ 2002 թ. հիմնադրվել է «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամը (ՁԻՀ)[3]: ՀՀ կառավարության կողմից ընդունվել են ինովացիոն գործունեությանն առնչվող մի շարք որոշումներ, իսկ 2006 թ.՝ ուժի մեջ է մտել «Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը[4]:

Հետճգնաժամային փուլ

Ինստիտուցիոնալ բարեփոխումների առումով, հետճգնաժամային փուլը նախորդի շարունակությունն է: Չնայած նորարարությունները խթանելու համար որոշակի ֆորմալ ինստիտուտների առկայությանը, այնուամենայնիվ, 2010 թ. սկսած, տնտեսության մրցունակության բարձրացման և որակյալ տնտեսական աճի ապահովման ուղղությամբ շոշափելի արդյունքներ դեռևս չեն գրանցվել: Դրա մասին է վկայում այն, որ մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն 2016 թ. կազմել է 3,606 ԱՄՆ դոլար, այն դեպքում, երբ 2008 թ. հասել էր իր պիկային ցուցանիշին՝ 4,010 ԱՄՆ դոլար: Իհարկե, 2010 թ. ի վեր մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն Հայաստանում աճել է, սակայն այդ ցուցանիշի վրա զգալի ազդեցություն է ունեցել արտագաղթի բարձր տեմպը: Այսպես՝ 1990-ական թվականներից սկսած մինչև 2016 թ. բնակչության թիվը կրճատվել է մոտ 613 հազ.-ով, ինչը, բնականաբար, զգալիորեն ազդել է մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի վրա: Ավելին, եթե իրականացնենք գիտական վերացարկում և չեզոքացնենք արտագաղթի ազդեցությունը՝ ընդունելով բնակչության թիվը ճիշտ նույնքան, որքան 1990 թ. էր (3,538 հազ.մարդ)[5], ապա 2016 թ. մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն կկազմի 2,981 ԱՄՆ դոլար: Հետևաբար՝ որ արտագաղթի ազդեցությունը չեզոքացնելու

---

[1] Լ. Կարապետյան, ՀՀ-ում ներդրումների արդյունավետ տեղաբաշխման հիմնահարցի շուրջ, էջ 71–72:

[2] Համաշխարհային բանկի վիճակագրություն:

[3] http://www.eif.am/arm/about/

[4] http://www.innovcentre.am/hy/article/55

[5] ՀԲ վիճակագրություն:

պարագայում մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն զգալիորեն նվազում է: Ինչ վերաբերում է այս փուլում տեխնոլոգիական բաղադրիչով պայմանավորված որակյալ աճին, ապա պետք է փաստել, որ վերջինիս առնչվող տեղեկատվության, կապի և մասնագիտական, գիտական ու տեխնիկական գործունեության ծառայությունների մասնաբաժինները 2015 թ. համախառն ծառայությունների մեջ կազմել են համապատասխանաբար՝ 19.1% և 5.6%[1]: Իսկ ահա արդյունաբերության ոլորտում տեխնոլոգիական բաղադրիչի մասնակցությամբ արտադրանքի թողարկումն ընդհանուր արդյունաբերության մեջ մոտ 2.3% է, ինչը, կարծում ենք, բավական ցածր ցուցանիշ է[2]:

ՀՀ տնտեսական աճի փուլային ուսումնասիրության արդյունքում կարելի է կատարել հետևյալ եզրակացությունները.

1. Առաջին երկու փուլի ընթացքում նախատնտեսական անկումը, ապա վերականգնողական աճը պայմանավորված էին պլանային տնտեսական համակարգից ազատ շուկայական տնտեսավարմանն անցնելու ինստիտուցիոնալ փոխակերպումներով (տրանսֆորմացիա), այնուհետև ինստիտուցիոնալ հարմարվողականությամբ, որոնք, ըստ էության, արտաքին ազդակների ազդեցության արդյունք են եղել:
2. Երրորդ փուլում տնտեսական բուռն աճը պայմանավորված էր շինարարության, արտերկրից ստացվող դրամական փոխանցումների և ծառայությունների գործոններով, որոնցից առաջին երկուսը երկարաժամկետ հեռանկար չունեցող, բնույթով անկայուն գործոններ են և չեն բխում տնտեսության մրցունակության բարձրացումից:
3. Վերջին՝ հետճգնաժամային փուլում տնտեսական աճն աչքի է ընկել չափավոր տեմպերով: Բացի այդ, այն ապահովվել է արդյունաբերության և առևտրի ու ծառայությունների ոլորտներում, որոնցից, սակայն, ոչ մեկում տեխնոլոգիական բաղադրիչն էական չափով մասնակցություն չի ունեցել:

Այսպիսով՝ պետք է նշել, որ Հայաստանում նորարարությունների խթանումն ու տեխնոլոգիական բաղադրիչով պայմանավորված մրցունակ արտադրանքի թողարկումն այլընտրանք չունեն, քանի որ դրանք նախ՝ ավելացված մեծ արժեք և համաշխարհային եկամուտների մեջ առավել մեծ մասնաբաժին ունենալու հնարավորություն են ընձեռում, ապա մրցունակ տնտեսության ձևավորման և երկարաժամկետ որակյալ աճի ապահովման գրավական են:

---

[1] Վիճակագրական տվյալները վերցված են ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքից

[2] Հաշվարկը կատարել ենք ՀՀ ԱՎԾ 2016 թ. տարեգրքի տվյալների հիման վրա: Որպես բարձր տեխնոլոգիական արտադրանք են համարվել քիմիական նյութերը և քիմիական արտադրատեսակները, դեղագործական արտադրանքը, համակարգիչները, էլեկտրոնային և օպտիկական սարքավորումները, էլեկտրական սարքավորումները, այլ խմբերում չներառված մեքենաները և սարքավորումները և տրանսպորտային այլ սարքավորումները, որոնց գումարային արժեքը հարաբերվել է արդյունաբերության համախառն թողարկման ծավալին:

ЭДГАР ТАГАРЯН

ОСОБЕННОСТИ ДОЛГОСРОЧНОГО ЭКОНОМИЧЕСКОГО РОСТА АРМЕНИИ

Ключевие слова: *институциональная ловушка, высокотехнологичная продукция, институциональные реформы, технологический компонент*

Несмотря на то, что ВВП Армении значительно увеличился с 2000-х годов, даже в двузначных цифрах за несколько лет. Он был обусловлен ростом, зафиксированным в областях без долгосрочных перспектив. С учетом особенностей экономического роста Армении в разные периоды наблюдались четыре фазы роста и исследование осуществлено в соответствии с этими этапами, подчеркивая роль институтов, работающих особенно в направлении технологических изменений.

EDGAR THAGARYAN

PECULIARITIES OF LONG-TERM ECONOMIC GROWTH OF ARMENIA

Key words: *institutional trap, high-tech products, institutional reforms, technological component*

Although Armenia's GDP has grown dramatically since the 2000s, even at double digits in some years, it has been conditioned by the growth registered in areas without long-term prospects. Taking into account the peculiarities of Armenia's economic growth in different periods, four phases of growth have been observed, the analysis of these stages, highlighting the role of institutions operating especially for technological change.

ԱՐԾՐՈՒՆԻ ԹՈՐՈՍՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, ՀՊՏՀ

ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ ԵՎ ԲԵՎԵՌԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Հիմնաբառեր. *եկամուտներ, բնակչություն, տնային տնտեսություն, բևեռացում, տրանսֆերտներ, կառուցվածք, աղքատություն*

Հոդվածում դիտարկվել է ՀՀ բնակչության դրամական եկամուտների դինամիկայի ազդեցությունը նրանց եկամուտների շերտավորման վրա:

2005–2015 թթ. վիճակագրական նյութի հիման վրա վերլուծվել են բնակչության եկամուտների կառուցվածքի փոփոխությունները: Արդյունքում բացահայտվել է բնակչության համախառն եկամուտներում դրամական եկամուտների տեսակարար կշռի աճը, որն էլ վկայում է հանրապետությունում շուկայական հարաբերությունների ձևավորման դրական միտումների մասին: